ԲԺՇԿԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Բժշկի հիմնական պարտավորությունները

Բժիշկը պարտավոր է՝

- մշտապես ներկայացնել իր անկախ մասնագիտական տեսակետերը և պահպանել մասնագիտական վարվելակերպի բարձրագույն նորմերը,
- հարգել բուժումն ընունելու կամ մերժելու պացիենտի իրազեկված իրավունքը,
- թույլ չտալ, որպեսզի իր մասնագիտական դիրքորոշումը կրի անձնական շահի կամ անարդար խտրականության ազդեցությունը,
- հակված լինել տրամադրելու մասնագիտական և բարոյական առումով ամբողջապես անկախ ու համարժեք բուժական ծառայություններ՝ պահպանելով մարդու հանդեպ հարգանքը և հոգատարությունը,
- լինել ազնիվ պացիենտների և գործընկերների հետ և զեկուցել համապատասխան մարմիններին այն բժիշկների մասին, ովքեր գործում են էթիկայի և իրավասության սահմաններից դուրս կամ զբաղված են խաբեությամբ և խարդախությամբ,
- չունենալ որևէ ֆինանսական շահ կամ այլ դրդապատճառ՝ պարզապես պացիենտին ուղեգրելիս կամ հատուկ բուժում նշանակելիս,
- հարգել պացիենտների, գործընկերների և այլ առողջապահության ոլորտի մասնագետների իրավունքներն ու նախասիրությունները,
- ընդունել իր կարևոր դերը հանրության կրթման գործում, սակայն, զգուշանալ հայտնագործությունները, նոր տեխնոլոգիաները և բուժման նոր մեթոդները ոչ մասնագիտական ուղիներով լսարանին հասցնելուց,
- պաշտոնապես հասաստել միայն այն, ինչն ինքն անձամբ է ստուգել,
- ձգտել լավագույնս օգտագործել առողջապահական միջոցները ի շահ պացիենտների և նրանց ընտանիքների,
- որոնել ու գտնել համարժեք ուշադրություն և խնամք այն դեպքերում, երբ պացիենտը տառապում է որևէ հոգեկան կամ ֆիզիկական հիվանդությամբ,
- հարգել տեղական և ազգային էթիկայի նորմերը:

Պացիենտների հանդեպ պարտավորությունները

Բժիշկը պարտավոր է՝

- մշտապես հիշել մարդու կյանքի նկատմամբ իր պարտադիր հարգանքի մասին,
- բժշկական օգնություն տրամադրելիս առաջնորդվել հիվանդի առավելագույն շահերով,
- պահպանել իր պացիենտի հանդեպ լիարժեք օրինապահությունը և գիտական ռեսուրսների մատչելիությունը: Եթե հետազոտությունը կամ բուժումը վեր է իր հնարավորություններից, նա պետք է խորհրդակցի կամ ուղեգրի պացիենտին համապատասխան հնարավորություններ ունեցող այլ բժշկի մոտ,
- հարգել պացիենտի գաղտնապահության իրավունքը: Էթիկայի սահմաններում բացահայտել պացիենտի վերաբերյալ գաղտնի տեղեկատվությունը իր իսկ համաձայնությամբ կամ, երբ առկա է պացիենտի կամ ուրիշների բուժմանը սպառնացող

իրական վտանգ, և այդ բուժումը կարող է իրականացվել միայն գաղտնապահության սկզբունքների խախտմամբ,

- տրամադրել անհետաձգելի օգնությունը որպես մարդասիրական պարտավորություն, մինչև հավաստիանալը, որ այլոք ցանկանում են և կարող են տվյալ օգնությունը ցուցաբերել,
- որպես երրորդ կողմ հանդես գալու դեպքում համոզվել, որ պացիենտը լիարժեքորեն տեղեկացված է տվյալ իրավիճակի վերաբերյալ,
- չմտնել սեռական և բռնի կամ չարաշահող հարաբերության մեջ իր պացիենտների հետ:

Գործընկերների հանդեպ պարտավորությունները

Բժիշկը պարտավոր է՝

- գործընկերներին վերաբերվել այնպես, ինչպես ինքը կցանկանար, որ նրանք վերաբերվեին իր հետ,
- չխաթարել իր գործընկերների հարաբերությունները պացիենտի հետ՝ վերջինիս գրավելու նպատակով,
- ըստ բժշկական անհրաժեշտության հաղորդակցվել հիվանդի բուժման մեջ ներգրավված այլ գործընկերների հետ: Այդ ընթացքում հարգելով պացիենտի տվյալների գաղտնապահությունը և սահմանափակվելով միայն անհրաժեշտ տեղեկատվությամբ:

Ժնևյան հռչակագիր

Դառնալով բժիշկ (բժշկական մասնագիտության անդամ) և ներգրավվելով բժշկական մասնագիտության մեջ՝

- ես հանդիսավոր կերպով խոստանում եմ նվիրել իմ կյանքը մարդկությանը ծառայելուն,
- ես պետք է հարգեմ և երախտապարտ լինեմ իմ ուսուցիչներին,
- ես պետք է կատարեմ իմ մասնագիտական գործունեությունը խղճով և արժանապատվորեն,
- իմ պացիենտի առողջությունը իմ առաջնային մտահոգությունն է,
- ես պետք է հարգեմ ինձ վստահված գաղտնիքները անգամ պացիենտի մահվանից հետո,
- ես պետք է իմ հնարավորությունների սահմաններում ամեն գնով պահպանեմ բժշկի մասնագիտության պատիվը և ազնիվ ավանդույթները,
- իմ գործընկերները պետք է համարվեն իմ քույրերն ու եղբայրները,
- իմ մասնագիտական պարտքը կատարելիս ես երբեք խտրականություն չեմ ցուցաբերի՝ կախված իմ պացիենտի տարիքից, հիվանդությունից, հաշմանդամությունից, կրոնական, ազգային, ռասայական և սեռական պատկանելիությունից, քաղաքական հայացքներից, սեռական կողմնորոշումից և սոցիալական կարգավիճակից,
- ես ցուցաբերելու եմ առավելագույն հարգանք մարդկային կյանքի նկատմամբ,
- ես երբեք չեմ օգտագործի իմ բժշկական հմտությունները մարդու իրավունքների և քաղաքական ազատությունների վրա բռնանալու համար, այդ թվում՝ բուժման ընթացքում,
- իմ այս խոստումը տալիս եմ ամենայն պատասխանատվությամբ, իմ կամքով և երդվում եմ պատվով: